

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»
ՎՊՄԻ ռեկտոր
_____ Խաչատրյան Գ.Կ.
“ _17_ ” __01__ 2014թ.

**„ՎՊՄԻ,, ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների
աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց
մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու կարգ**

Հաստատվել է ՎՊՄԻ խորհրդի

05 05.2006 թ. նիստի որոշմամբ

Փոփոխվել է՝

(արձանագրություն թիվ 11 “__26__” __12__2013թ.)

1. Սույն կարգի իրավական հիմքն է Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետը:

Սույն կարգը վերաբերում է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում „ՎՊՄԻ“, ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների՝ ամբիոնի պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի /բացառությամբ դեկանի և ամբիոնի վարիչի/ հետ առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելուն:

2. Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալուց ոչ ուշ, քան 70 օր առաջ ամբիոնի վարիչի պահանջով ամբիոնի աշխատողը /պրոֆեսորը, դոցենտը, ասիստենտը, դասախոսը/ ամբիոնի նիստում հանդես է գալիս գրավոր հաշվետվությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանում իր ծավալած գիտամանկավարժական գործունեության մասին՝ ներկայացնելով հաշվետու ժամանակաշրջանում կատարած գիտական աշխատանքների ցուցակը և ամփոփ հաշվետվություն՝ սահմանված ձևաթղթերով:

3. Հաշվետու ժամանակաշրջանում ծավալած գիտամանկավարժական գործունեությունը դրական գնահատելու դեպքում ամբիոնը, հաշվի առնելով Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետը, կարող է ինստիտուտի ռեկտորին ներկայացնել առաջարկ՝ ամբիոնի պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի հետ առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու՝ որոշակի ժամկետով:

4. Ամբիոնի վարիչը ոչ ուշ, քան ամբիոնի նիստին հաջորդող աշխատանքային օրը ընդհանուր բաժին է ներկայացնում զեկուցագիր՝ կցելով ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքը, աշխատողի գիտական աշխատանքների ցուցակը, հաշվետվությունները:

Աշխատողի գիտամանկավարժական գործունեության թերացումների դեպքում ամբիոնի վարիչը զեկուցագիր է ներկայացնում թափուր պաշտոնի համար բաց մրցութային ընտրություն հայտարարելու մասին:

5. Ամբիոնի պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի՝ հաշվետու ժամանակաշրջանում ծավալած գիտամանկավարժական գործունեության մասին դրական կարծիքի դեպքում ռեկտորը նրա հետ կնքում է նոր աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով՝ ամբիոնի առաջարկին համապատասխան: Ռեկտորի կողմից նոր պայմանագիր կնքելու ամբիոնի առաջարկը կարող է մերժվել պրոռեկտորների հիմնավորված բացասական կարծիքի դեպքում: